

«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ
Հավասարակշռված կենսաթոշակային ֆոնդ

Ֆինանսական հաշվետվություններ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական հաշվետվություններ

Հաշվապահական հաշվեկշիռ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1-2
Եկամուտների և ծախսերի հաշվետվություն 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար	3-4

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

A. Ընդհանուր տեղեկատվություն	5
A1. Բաց տիպի հավաքական ներդրումների գործիքների բնութագրերը և գործունեությունը	5
A2. Հաշվապահական հաշվառման կանոններ և մեթոդներ	5
B. Բաժնետերերի կապիտալի և ֆինանսական պարտավորությունների փոփոխություններ	9
B1. Բաժնետերերի կապիտալի և փոփոխությունները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում	9
B2. «Բաժնետերերի կապիտալ» տողի վերակազմավորում մասնավոր կապիտալի ֆոնդերի և այլ ներդրումային գործիքների համար	9
B3. Փայերի բանակի փոփոխությունը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում	9
B4. Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ստացված և հատուցված անվանական գումարին վերաբերող դրամական հոսքեր	10
B5. Չուտ դրամական հոսքեր ֆինանսական պարտավորությունների գծով	10
B6. Չուտ ակտիվների ներկայացումն ըստ փայերի տեսակների	10
C. Տարբեր շուկաներում ուղղակի և անուղղակի ռիսկերի վերաբերյալ տեղեկատվություն	10
C1. Ուղղակի ռիսկերի ներկայացում ըստ շուկայի և ռիսկի տեսակի	10
C2. Անուղղակի ռիսկեր հավաքական ներդրումների գործիքների կառավարման տարբեր մակարդակների համար	14
D. Հաշվապահական հաշվեկշիռն և եկամուտների և ծախսերի հաշվետվությանը վերաբերող այլ տեղեկատվություն	15
D1. Դեբիտորական և կրեդիտորական պարտքեր. ներկայացում ըստ տեսակի	15
D2. Կառավարման և այլ վճարներ	15
D3. Ստանձնած և տրված պարտավորություններ	15
D4. Այլ տեղեկատվություն	15
D5. Բաշխման ենթակա միջոցների հատկացման աղյուսակ	16
E. ՀՀ դրամով կտիվների և պարտավորությունների պորտֆելի ցուցակում	18
E1. Հաշվեկշռային հոդվածների պորտֆելի ցուցակում	18
E2. Արտարժույթային ֆորվարդային գործարքների պորտֆելի ցուցակում	20
E3. Ֆորվարդային ֆինանսական գործիքների պորտֆելի ցուցակում	20
E4. Փայի դասը հեջավորելու համար օգտագործվող ֆորվարդային ֆինանսական գործիքների կամ արտարժույթային ֆորվարդային գործարքների պորտֆելի ցուցակում	22
E5. Պորտֆելի ցուցակման ամփոփում	22



«Զեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010
Վ. Սարգսյան փ. 26/1
«Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Կայք www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ Տնօրենների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ Հավասարակշռված կենսաթոշակային ֆոնդի (այսուհետ՝ Ֆոնդ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվեկշիռը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, այդ ամսաթվին ավարտված տարվա եկամուտների և ծախսերի հաշվետվությունը և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ֆոնդի ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները՝ Ֆրանսիայի համընդհանուր ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքների համաձայն:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ ներկայացված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ֆոնդից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների Էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), որը կիրառելի է հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ, և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի Էթիկայի պահանջների: Մենք կատարել ենք նաև Էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջների և ՀԷՄՍԽ կանոնագրքի համաձայն: Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Ֆոնդի 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որը 2025թ. ապրիլի 22-ի եզրակացությունում արտահայտել է չձևափոխված կարծիք այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունն ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է Ֆրանսիայի համընդհանուր ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքների համաձայն համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ֆոնդի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ֆոնդը լուծարելու կամ Ֆոնդի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ֆոնդի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները՝ որպես մեկ ամբողջություն, զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ընթացքում միշտ կհայտնաբերվի էական խեղաթյուրումներ, երբ առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ խելամոռրեն կարող է ակնկալվել, որ դրանք, կամ միասին վերցրած, կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:


Որպես ԱՄՍ-ներին համապատասխան իրականացվող աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի յուրմե՝

- որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:
- ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Ֆոնդի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների ողջամտությունը:

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել ֆոնդի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզնից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևավորել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել ֆոնդի կողմից անընդհատության հիմունքով գործունեությունը շարունակելու դադարեցմանը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, տեղեկացնում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Աուդիտորական առաջադրանքի ղեկավարը, որի արդյունքում ներկայացվում է այս աուդիտորական եզրակացությունը, Դավիթ Շամշյանն է:



Դավիթ Շամշյան
Աուդիտորական առաջադրանքի
ղեկավար

KPMG Armenia

«Զեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
22 ապրիլի 2026թ.



Իրինա Գևորգյան
«Զեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի
տնօրեն, Ղեկավար գործընկեր



Հաշվապահական հաշվեկշիռը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

ՀՀ դրամով	Ակտիվներ	
	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Հիմնական միջոցներ, զուտ	0.00	0.00
Ֆինանսական արժեթղթեր		
Բաժնետոմսեր և համանման գործիքներ (A)	43,870,000.00	45,368,000.00
Կարգավորվող կամ համանման շուկայում առուվաճառքի ենթարկվող	43,870,000.00	45,368,000.00
Կարգավորվող կամ համանման շուկայում առուվաճառքի չենթարկվող	0.00	0.00
Փոխարկելի պարտատոմսեր (B)	0.00	0.00
Կարգավորվող կամ համանման շուկայում առուվաճառքի ենթարկվող	0.00	0.00
Կարգավորվող կամ համանման շուկայում առուվաճառքի չենթարկվող	0.00	0.00
Պարտատոմսեր և համանման արժեթղթեր (C)	3,879,248,979.84	3,636,395,913.81
Կարգավորվող կամ համանման շուկայում առուվաճառքի ենթարկվող	3,879,248,979.84	3,636,395,913.81
Կարգավորվող կամ համանման շուկայում առուվաճառքի չենթարկվող	0.00	0.00
Պարտքային արժեթղթեր (D)	0.00	0.00
Կարգավորվող կամ համանման շուկայում առուվաճառքի ենթարկվող	0.00	0.00
Կարգավորվող կամ համանման շուկայում առուվաճառքի չենթարկվող	0.00	0.00
Հավաքական ներդրումների գործիքներ (UCI) և ներդրումային ֆոնդերի փայեր (E)	3,609,126,092.61	2,658,850,969.43
Հավաքական ներդրումների գործիքներ փոխանցելի արժեթղթերում (UCITS)	3,502,741,675.98	2,597,576,758.69
Այլնորանքային ներդրումային ֆոնդեր և համարժեքներ ԵՄ այլ անդամ պետություններում	28,202,620.23	23,000,547.45
Այլ հավաքական ներդրումների գործիքներ և ներդրումային ֆոնդեր	78,181,796.40	38,273,663.29
Ավանդներ (F)	2,277,851,863.01	1,056,975,821.93
Ֆորվարդային ֆինանսական գործիքներ (G)	3,694,183.12	0.00
Ժամանակավոր գործարքներ արժեթղթերով (H)	0.00	0.00
Հետգնման պայմանագրերով ձեռք բերված արժեթղթեր հանդիսացող դեբիտորական պարտքեր	0.00	0.00
Գրավադրված արժեթղթեր հանդիսացող դեբիտորական պարտքեր	0.00	0.00
Փոխառության տրված ֆինանսական արժեթղթեր հանդիսացող արժեթղթեր	0.00	0.00
Փոխառու ֆինանսական արժեթղթեր	0.00	0.00
Հետգնման պայմանագրերով վաճառված ֆինանսական արժեթղթեր	0.00	0.00
Այլ ժամանակավոր գործարքներ	0.00	0.00
Վարկեր (I) (*)	0.00	0.00
Այլ որակավոր ակտիվներ (J)	0.00	0.00
Ընդամենը որակավոր ակտիվներ I = (A+B+C+D+E+F+G+H+I+J)	9,813,791,118.58	7,397,590,705.17
Դեբիտորական պարտքերի և ակտիվների ճշգրտման հաշիվներ	0.00	92,829,630.00
Ֆինանսական հաշիվներ	159,718,309.60	159,088,988.63
Ընդամենը ակտիվներ, բացառությամբ որակավոր ակտիվների II	159,718,309.60	251,918,618.63
Ընդամենը ակտիվներ I+II	9,973,509,428.18	7,649,509,323.80

(*) Դիտարկվող հավաքական ներդրումների գործիքները ներառված չեն այս բաժնում:

Հաշվապահական հաշվեկշիռը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (շարունակություն)

ՀՀ դրամով	Պարտավորություններ	
	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Բաժնետերերի կապիտալ		
Կապիտալ	8,862,563,574.26	6,928,233,860.31
Զբաղիչված շահույթ զուտ եկամտի գծով	0.00	0.00
Զուտ իրացված կապիտալի օգուտ և կորուստ՝ տեղափոխված հաջորդ ժամանակաշրջան ժամանակաշրջանի զուտ եկամուտ/վնաս	0.00 1,097,786,440.33	0.00 712,547,992.36
Բաժնետերերի կապիտալ I	9,960,350,014.59	7,640,781,852.67
Ֆինանսական պարտավորություններ II (*)	0.00	0.00
Բաժնետերերի կապիտալ և ֆինանսական պարտավորություններ (I+II)	9,960,350,014.59	7,640,781,852.67
Որակվող պարտավորություններ		
Ֆինանսական գործիքներ (A)	0.00	0.00
Ֆինանսական գործիքների օտարումներ	0.00	0.00
Ժամանակավոր գործարքներ ֆինանսական արժեթղթերով	0.00	0.00
Ֆորվարդային ֆինանսական գործիքներ (B)	0.00	1,016,436.88
Փոխառություններ (C) (*)	0.00	0.00
Այլ որակվող պարտավորություններ (D)	0.00	0.00
Ընդամենը որակվող պարտավորություններ III = (A+B+C+D)	0.00	1,016,436.88
Այլ պարտավորություններ		
Պարտքերի և պարտավորությունների ճշգրտման հաշիվներ	13,159,413.59	7,711,034.25
Բանկային վարկեր	0.00	0.00
Ընդամենը այլ պարտավորություններ IV	13,159,413.59	7,711,034.25
Ընդամենը պարտավորություններ I + II + III + IV	9,973,509,428.18	7,649,509,323.80

(*) Դիտարկվող հավաքական ներդրումների գործիքները ներառված չեն այս բաժնում:

Հաստատվել է ղեկավարության կողմից 2026թ. ապրիլի 22-ին:

Ժան Մազեջյան

Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի
Գործադիր տնօրեն



**Եկամուտների և ծախսերի հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

ՀՀ դրամով	2025թ.	2024թ.
Չուտ ֆինանսական եկամուտ		
Եկամուտ ֆինանսական գործարքներից		
Եկամուտ բաժնետոմսերից	9,173,960.48	3,964,618.80
Եկամուտ պարտատոմսերից	386,201,662.28	341,853,555.43
Եկամուտ պարտքային արժեթղթերից	0.00	0.00
Եկամուտ հավաքական ներդրումների գործիքների փայերից	0.00	0.00
Եկամուտ ֆորվարդային ֆինանսական գործիքներից	5,949,794.12	2,219,827.58
Եկամուտ արժեթղթերով ժամանակավոր գործարքներից	0.00	0.00
Եկամուտ վարկերից և դեբիտորական պարտքերից	0.00	0.00
Եկամուտ այլ որակվող ակտիվներից և պարտավորություններից	157,651,194.59	109,201,326.19
Այլ ֆինանսական եկամուտ	0.00	0.00
Ընդամենը եկամուտ ֆինանսական գործարքներից	558,976,611.47	457,239,328.00
Ծախսեր ֆինանսական գործարքների գծով		
Ծախսեր ֆինանսական գործարքների գծով	0.00	0.00
Ծախսեր ֆորվարդային ֆինանսական գործիքների գծով	(2,050,870.52)	(1,049,069.36)
Ծախսեր արժեթղթերով ժամանակավոր գործարքների գծով	0.00	0.00
Ծախսեր փոխառությունների գծով	0.00	0.00
Ծախսեր այլ որակվող ակտիվների և պարտավորությունների գծով	0.00	0.00
Ծախսեր ֆինանսական պարտավորությունների գծով	0.00	0.00
Այլ ֆինանսական ծախսեր	(49,201.34)	0.00
Ընդամենը ծախսեր ֆինանսական գործարքների գծով	(2,100,071.86)	(1,049,069.36)
Ընդամենը զուտ ֆինանսական եկամուտ (A)	556,876,539.61	456,190,258.64
Այլ եկամուտ		
Կառավարման վճարների ռետրոցեսիա հավաքական ներդրումների գործիքների գծով	0.00	0.00
Վճարումներ՝ որպես կապիտալի կամ կատարողականի երաշխավորություններ	0.00	0.00
Այլ եկամուտ	0.00	0.00
Այլ ծախսեր		
Ակտիվների կառավարչի կառավարման վճարներ	(101,273,422.84)	(79,408,053.82)
Մասնավոր կապիտալի ֆոնդի աուդիտի և հետազոտությունների ծախսեր	0.00	0.00
Հարկեր և տուրքեր	0.00	0.00
Այլ ծախսեր	0.00	0.00
Ընդամենը այլ եկամուտ և այլ ծախսեր (B)	(101,273,422.84)	(79,408,053.82)
Ընդամենը զուտ եկամուտ մինչև հաշվեգրումները (C = A-B)	455,603,116.77	376,782,204.82
Ժամանակաշրջանի զուտ եկամտի ճշգրտում (D)	34,852,331.09	30,744,632.30
Ընդամենը զուտ եկամուտ I = (C+D)	490,455,447.86	407,526,837.12
Չուտ իրացված կապիտալի օգուտ և կորուստ մինչև հաշվեգրումները		
Իրացված կապիտալի օգուտ/կորուստ	58,461,289.60	(8,134,097.38)
Արտաքին գործարքների գծով ծախսեր և փոխանցման վճարներ	(598,964.96)	(565,515.33)
Հետազոտությունների ծախսեր	0.00	0.00
Ապահովագրողներին փոխհատուցվող իրացված կապիտալի օգուտի մասնաբաժին	0.00	0.00
Ստացված ապահովագրական հատուցում	0.00	0.00
Որպես կապիտալի կամ կատարողականի երաշխավորություններ ստացված վճարումներ	0.00	0.00
Ընդամենը զուտ իրացված կապիտալի օգուտ մինչև հաշվեգրումները (E)	57,862,324.64	(8,699,612.71)
Չուտ իրացված կապիտալի օգուտի կամ կորուստի ճշգրտումներ (F)	7,823,264.24	(2,662,731.88)
Չուտ կապիտալի օգուտ կամ կորուստ II = (E+F)	65,685,588.88	(11,362,344.59)

**Եկամուտների և ծախսերի հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)**

ՀՀ դրամով	2025թ.	2024թ.
Չուտ չիրացված կապիտալի օգուտ և կորուստ մինչև հաշվեգրումները		
Չիրացված կապիտալի օգուտի և կորստի փոփոխություն, ներառյալ որակավոր ակտիվների գծով փոխարժեքային տարբերությունները	525,391,654.33	285,530,444.69
Արտարժույթով ֆինանսական հաշիվների գծով փոխարժեքային տարբերություններ	335,504.78	(612,735.00)
Որպես կապիտալի կամ կատարողականի երաշխավորություններ ստացվելիք վճարումներ	0.00	0.00
Ապահովագրողներին փոխհատուցվելիք չիրացված կապիտալի օգուտի մասնաբաժին	0.00	0.00
Ընդամենը զուտ չիրացված կապիտալի օգուտ մինչև հաշվեգրումները (G)	525,727,159.11	284,917,709.69
Չուտ չիրացված կապիտալի հավելաճի կամ կորստի ճշգրտումներ (H)	15,918,244.48	31,465,790.14
Չուտ չիրացված կապիտալի օգուտ կամ կորուստ III = (G+H)	541,645,403.59	316,383,499.83
Միջանկյալ շահաբաժիններ		
Հաշվետու ժամանակաշրջանում վճարված զուտ միջանկյալ շահաբաժիններ (J)	0.00	0.00
Հաշվետու ժամանակաշրջանում զուտ իրացված կապիտալի օգուտի և կորստի գծով վճարված միջանկյալ շահաբաժիններ (K)	0.00	0.00
Ընդամենը ժամանակաշրջանի ընթացքում վճարված միջանկյալ շահաբաժիններ IV = (J+K)	0.00	0.00
Շահույթահարկ V (*)	0.00	0.00
Չուտ եկամուտ I + II + III + IV + V	1,097,786,440.33	712,547,992.36

(*) Դիտարկվող հավաքական ներդրումների գործիքները ներառված չեն այս բաժնում:

Հաստատվել է ղեկավարություն կողմից 2026թ. ապրիլի 22-ին:


Ժան Մազեջյան
Կենսաթոշակային ֆոնդի կառավարչի
Գործադիր տնօրեն

A. Ընդհանուր տեղեկատվություն

A1. Բաց տիպի հավաքական ներդրումների գործիքների բնութագրերը և գործունեությունը

A1a. Կառավարման ռազմավարություն և ընդհանուր նկարագիր

Ֆոնդը կենսաթոշակային ֆոնդ է, որը կառավարվում է անկախ պրոֆեսիոնալ ակտիվների կառավարիչների կողմից մինչև միջոցները կենսաթոշակային հատուցումների ձևով կվճարվեն կենսաթոշակային տարիքը լրացած մասնակիցներին: Ֆոնդի մասնակիցները կենսաթոշակային ֆոնդի ակտիվների սեփականատերերն են:

Ֆոնդը ներդրումներ է կատարում Հայաստանի և օտարերկրյա բարձրորակ արժեթղթերում, ընդ որում արտարժույթով ներդրումները չեն գերազանցում Ֆոնդի ակտիվների 40%-ը: Ֆոնդի նպատակն է առավելագույնի հասցնել ակտիվների ընդհանուր եկամտաբերությունը՝ իր ակտիվների մինչև 50%-ը ներդնելով բաժնետոմսերում, բաժնային ֆոնդերում և բաժնետոմսերին համարժեք գործիքներում, իսկ մնացածը՝ պարտատոմսերում, պարտատոմսերի ֆոնդերում, դրամական շուկայի գործիքներում, ավանդներում և այլ ակտիվներում: Թիրախային խումբ են հանդիսանում կենսաթոշակային խնայողություն իրականացնողները՝ ռիսկի նկատմամբ բարձր հակվածությամբ:

ՀԱՎԱՔԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԱՇԴԱԳԻՐԸ/ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՊԵՏՔ Ե ԱՄԲՈՂՏՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՃՇԳՐԻՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵՆ ԱՅՍ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

A1b. Հավաքական ներդրումների գործիքներին բնորոշ հատկանիշները վերջին 5 հաշվետու ժամանակաշրջանների ընթացքում

	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2023թ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2025թ.
Չուտ ակտիվներ ՀՀ դրամով	3,826,388,125.20	4,239,927,415.79	5,892,790,277.37	7,640,781,852.67	9,960,350,014.59
Փայերի թիվը	1,947,841.893991	2,371,724.584510	2,877,546.217972	3,382,917.657507	3,923,795.656555
Մեկ փային բաժին ընկնող զուտ ակտիվների արժեք	1,964.4244	1,787.6981	2,047.8525	2,258.6367	2,538.4477
Մեկ փային բաժին ընկնող զուտ կապիտալի օգուտի և կորստի կապիտալի- զացիա	24.15	(20.31)	(49.83)	(3.35)	16.74
Եկամտի կապիտալի- զացիա մեկ փային հաշվով	105.10	107.28	115.39	120.46	124.99

A2. Հաշվապահական հաշվառման կանոններ և մեթոդներ

Տարեկան ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆրանսիայի համընդհանուր ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքների համաձայն: Տարեկան ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ANC (Ֆրանսիայի հաշվապահական հաշվառման ստանդարտների լիազոր մարմին) թիվ 2020-07 կանոնակարգով սահմանված ձևաչափով՝ փոփոխված ANC 2022-03 կանոնակարգով:

Կիրառվում են հաշվապահական հաշվառման հետևյալ համընդհանուր սկզբունքները, մասնավորապես՝

- ճշմարիտ ներկայացում և իրական պատկեր,
- կանոնակարգվածություն և ճշմարտացիություն,
- ողջամտություն,
- հաշվապահական հաշվառման մեթոդների հետևողականությունը մի հաշվետու ժամանակաշրջանից մյուսը:

A2. Հաշվապահական հաշվառման կանոններ և մեթոդներ (շարունակություն)

Հաստատուն եկամտաբերությամբ արժեթղթերից ստացված հասույթը ճանաչվում է հաշվեգրման հիմունքով: Արժեթղթերի ձեռքբերումները և օտարումները ճանաչվում են ինքնարժեքով՝ առանց գործարքի գծով ծախսումների:

Պորտֆելի հաշվառման արժույթը հայկական դրամն է (ՀՀ դրամ): Ֆինանսական հաշվետվություններում տոկոսային արտահայտմամբ մասնակցության չափը և դիրքերը ներկայացված են որպես զուտ ակտիվների տոկոս (%) հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ֆինանսական տարվա տևողությունը 12 ամիս է: Հաշվետու ժամանակաշրջանը 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարին է:

Ֆոնդի կառավարիչը «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՉՄԵՆԹ» ՓԲԸ-ն է: Ֆոնդի վարչարարությունն իրականացվում է «ԿԱՍԵԻՍ Ֆանդ Ադմինիստրեյշն» ընկերության կողմից: Ֆոնդի պահառուն և մասնակիցների ռեեստրավարը «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ն է:

Ֆոնդը կենսաթոշակային ֆոնդ է, որը կառավարվում է անկախ պրոֆեսիոնալ ակտիվների կառավարիչների կողմից մինչև միջոցները կենսաթոշակային հատուցումների ձևով կվճարվեն կենսաթոշակային տարիքը լրացած մասնակիցներին: Ֆոնդի մասնակիցները կենսաթոշակային ֆոնդի ակտիվների սեփականատերերն են:

Ֆոնդը ներդրումներ է կատարում Հայաստանի և օտարերկրյա բարձրորակ արժեթղթերում, ընդ որում արտարժույթով ներդրումները չեն գերազանցում Ֆոնդի ակտիվների 40%-ը: Ֆոնդի նպատակն է առավելագույնի հասցնել ակտիվների ընդհանուր եկամտաբերությունը՝ իր ակտիվների մինչև 50%-ը ներդնելով բաժնետոմսերում, բաժնային ֆոնդերում և բաժնետոմսերին համարժեք գործիքներում, իսկ մնացածը՝ պարտատոմսերում, պարտատոմսերի ֆոնդերում, դրամական շուկայի գործիքներում, ավանդներում և այլ ակտիվներում: Թիրախային խումբ են հանդիսանում կենսաթոշակային խնայողություն իրականացնողները՝ ռիսկի նկատմամբ բարձր հակվածությամբ:

Ակտիվների գնահատման կանոնները. ֆինանսական գործիքները սկզբնապես ճանաչվում են սկզբնական արժեքով և հաշվապահական հաշվեկշռում ներկայացվում են ներկա արժեքով, որն իրենից ներկայացնում է վերջին հասանելի շուկայական արժեքը կամ, շուկայի բացակայության դեպքում, արտաքին ռեսուրսների կամ ֆինանսական մոդելների միջոցով որոշված արժեքը:

Արժեթղթերի ներկա արժեքների միջև տարբերությունները որոշվում են վերը նշված եղանակով և դրանց սկզբնական արժեքը ճանաչվում է ֆինանսական հաշվետվություններում որպես «գնահատումների տարբերություն»: Արժեթղթերով գործարքները գրանցվում են առուվաճառքի ամսաթվով:

Պորտֆելի արժույթից տարբեր արժույթով գնանշված արժեթղթերը գնահատվում են վերը նշված եղանակով և այնուհետև փոխարկվում են պորտֆելի արժույթի՝ գնահատման ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքով:

Ավանդներ և ֆինանսական հաշիվներ. ավանդները գնահատվում են գծային մեթոդով: Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները բանկերում:

Կարգավորվող շուկայում առուվաճառքի ենթարկվող բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլ արժեթղթեր կամ այլ համանման գործիքներ. կարգավորվող շուկայում առուվաճառքի ենթարկվող բաժնետոմսերը և այլ արժեթղթերը կամ այլ համանման գործիքները գնահատվում են տվյալ օրվա շուկայի փակման գնի հիման վրա:

Պարտատոմսերը և համանման արժեթղթերը գնահատվում են ֆինանսական ծառայություններ մատուցող տարբեր կազմակերպությունների կողմից ներկայացված փակման գներով: Փակման օրվա ընթացքում գործարքի բացակայության դեպքում արժեթղթերը գնահատվում են ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպության կողմից ներկայացված գնման և վաճառքի միջին գնով: Պարտատոմսերի և համանման արժեթղթերի գծով հաշվեգրված տոկոսը հաշվարկվում է մինչև ակտիվի գնահատման ամսաթիվը:

Կարգավորվող շուկայում առուվաճառքի չենթարկվող բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլ արժեթղթեր կամ այլ համանման գործիքներ. կարգավորվող շուկայում առուվաճառքի չենթարկվող արժեթղթերը գնահատվում են Ֆոնդի կառավարչի կողմից՝ օգտագործելով զուտ կապիտալի և եկամտաբերության վրա հիմնված մեթոդները՝ հաշվի առնելով վերջին խոշոր գործարքների գները:

A2. Հաշվապահական հաշվառման կանոններ և մեթոդներ (շարունակություն)

Շրջանառելի պարտքային գործիքներ (պարտավորագրեր). շրջանառելի պարտքային գործիքները, որոնք ակտիվորեն առուվաճառքի չեն ենթարկվում էական ծավալով, գնահատվում են ակտուարային մեթոդով ստորև նշված հաշվարկային տոկոսադրույքներով, գումարած թողարկողի ներքին բնութագրերը ներկայացնող հավելումները:

- Մեկ տարի կամ պակաս ժամկետայնությամբ պարտավորագրերը գնահատվում են եվրոյի միջբանկային առաջարկի տոկոսադրույքով (Euribor):
- Մեկ տարուց ավելի ժամկետայնությամբ պարտավորագրերը գնահատվում են միջնաժամկետ տոկոսակիր պետական գանձապետական պարտատոմսերի համար գործող տոկոսադրույքով, իսկ ավելի երկարաժամկետ գանձապետական պարտատոմսերի (BTAN) դեպքում՝ կարճաժամկետ կտրվածքով փոխարկելի գանձապետական պարտատոմսերի (OAT) տոկոսադրույքով:
- Երեք ամիս և պակաս ժամկետայնությամբ շրջանառելի պարտքային գործիքները կարող են գնահատվել գծային մեթոդով:

Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական պարտատոմսերը գնահատվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից յուրաքանչյուր օր հրապարակվող շուկայական տոկոսադրույքով:

Փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքներ (UCITS). փոխանցելի արժեթղթերում հավաքական ներդրումների գործիքների փայերը կամ բաժնետոմսերը գնահատվում են զուտ ակտիվների վերջին հասանելի արժեքով:

Ժամանակավոր գործարքներ արժեթղթերով. հետվաճառքի պայմանագրերով պահվող արժեթղթերը հաշվառվում են ակտիվներում՝ «Վարկեր՝ հետվաճառքի պայմանագրերով պահվող արժեթղթերի դիմաց» հոդվածում պայմանագրով սահմանված գումարով, գումարած ստացվելիք հաշվեգրված տոկոսները:

Հետգնման պայմանագրերով վաճառված արժեթղթերը հաշվառվում են գնման պորտֆելում ընթացիկ արժեքով: Համապատասխան պարտքը հաշվառվում է վաճառքի պորտֆելում՝ պայմանագրով սահմանված արժեքով, գումարած վճարվելիք հաշվեգրված տոկոսները:

Փոխառությամբ տրված արժեթղթեր գնահատվում են ընթացիկ արժեքով և հաշվառվում են ակտիվներում՝ «Վարկեր՝ փոխառությամբ տրված արժեթղթերի դիմաց» հոդվածում ընթացիկ արժեքով, գումարած ստացվելիք հաշվեգրված տոկոսները:

Փոխառու արժեթղթերը հաշվառվում են ակտիվներում՝ «Փոխառու արժեթղթեր» հոդվածում պայմանագրով սահմանված գումարով, և պարտավորություններում՝ «Փոխառու արժեթղթերի գծով պարտքեր» հոդվածում պայմանագրով սահմանված գումարով, գումարած վճարվելիք հաշվեգրված տոկոսները:

Ածանցյալ գործիքներ

Կարգավորվող շուկայում առուվաճառքի ենթարկվող ածանցյալ գործիքներ կամ համարժեք ածանցյալ գործիքներ

Կարգավորվող շուկայում առուվաճառքի ենթարկվող ածանցյալ գործիքները գնահատվում են օրվա հաշվարկային գնով:

Կարգավորվող շուկայում առուվաճառքի չենթարկվող ածանցյալ գործիքներ կամ համարժեք ածանցյալ գործիքներ

Սվոփեր. տոկոսադրույքի սվոփը և/կամ ֆորվարդային արժույթային գործարքները գնահատվում են շուկայական արժեքով՝ ապագա տոկոսային հոսքերի շուկայական տոկոսադրույքներով (և/կամ փոխարժեքներով) զեղչման միջոցով հաշվարկված գնի համաձայն: Այդ գինը ճշգրտվում է պարտազանցման ռիսկի մասով:

Ինդեքսի սվոփերը գնահատվում են ակտուարային մեթոդով կոնտրագենտի կողմից տրամադրված հաշվարկային դրույքաչափի հիման վրա:

A2. Հաշվապահական հաշվառման կանոններ և մեթոդներ (շարունակություն)

Այլ սվոփերը գնահատվում են շուկայական արժեքով կամ Ֆոնդի կառավարչի կողմից սահմանված եղանակով:

Սվոփերի գծով հանձնառությունները ներկայացվում են անվանական արժեքով կամ համարժեք գումարով՝ անվանական արժեքի բացակայության դեպքում:

Կառավարման վճարներ. Կառավարման վճարները հաշվարկվում են 1.15% տարեկան դրույթաչափով, ներառյալ բոլոր կիրառելի հարկերը, ֆոնդի գույք ակտիվների արժեքի նկատմամբ՝ օրական կտրվածքով: Այդ վճարները ներկայացվում են Ֆոնդի եկամուտների և ծախսերի հաշվետվությունում: Կառավարման վճարներն ամբողջությամբ վճարվում են Ֆոնդի կառավարչին, որը կրում է Ֆոնդի բոլոր գործառնական ծախսերը, բացառությամբ աուդիտի արժեքի և կենսաթոշակային երաշխիքային ֆոնդի վճարի: Կառավարման վճարները չեն ներառում գործարքի գծով ծախսումները: Ֆինանսական հաշվետվություններում աուդիտի արժեքը և երաշխիքային ֆոնդի վճարները ներկայացվում են որպես կառավարման վճարների մաս:

Չուտ շահույթի բաշխում. Ժամանակաշրջանի գույք շահույթը (վնասը) տոկոսների, պարտքի, հավելավճարների, հատկացումների և շահաբաժինների հանրագումարն է, գումարած կանխիկ միջոցներից ստացված եկամուտը, հանած կառավարման վճարները և ֆինանսական գործարքների գծով ծախսերը և գումարած իրացված կապիտալի օգուտը և կորուստը: Մինչև Ֆրանսիայի համընդհանուր ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքների 2024թ. փոփոխությունները իրացված կապիտալի օգուտը կամ կորուստը և թողարկման/մարման վճարները չէին հաշվառվում որպես հասույթ: Ֆրանսիայի համընդհանուր ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքների 2024թ. փոփոխություններից հետո իրացված կապիտալի օգուտը կամ կորուստը հաշվառվում է որպես հասույթ:

Բաշխման ենթակա գումարներն են՝ ժամանակաշրջանի գույք շահույթը, գումարած չբաշխված շահույթը, գումարած կամ հանած տվյալ հաշվետու ժամանակաշրջանին վերաբերող հասույթի ճշգրտման հաշիվների մնացորդները:

Ժամանակաշրջանի ընթացքում թողարկված փայերի հավասարեցում

Հասույթի ճշգրտում. Բոլոր փայատերերը պետք է ստանան մեկ փայի դիմաց բաշխման ենթակա հավասարաչափ եկամուտ՝ անկախ թողարկման ամսաթվից: «Հասույթի ճշգրտում» հոդվածում ներկայացված ուղղիչ մեխանիզմը չեզոքացվում է թողարկումների և մարումների ազդեցությունը մեկ փային բաժին ընկնող եկամտի վրա: Ակտիվի գույք արժեքը յուրաքանչյուր անգամ հաշվարկելիս Ֆոնդը որոշում է բաշխման ենթակա եկամուտը: Թողարկումները կամ մարումներն ազդեցություն չունեն փայերի եկամտաբերության վրա: Հասույթի ճշգրտման մեխանիզմն ապահովում է թողարկումների և մարումների չեզոքությունը մեկ փային բաժին ընկնող բաշխման ենթակա եկամտի նկատմամբ:

Օգուտ և կորուստ. Ֆինանսական տարվա գույք իրացված օգուտը (հանած կառավարման վճարներից և իրացված կորուստից) կավելացնի նախորդ ֆինանսական տարիների նույն տեսակի գույք իրացված օգուտը, եթե Ֆոնդը չի բաշխել կամ չի կուտակել իր օգուտները, ինչպես նաև կավելացնի կամ կնվազեցնի իրացված օգուտի հավասարեցման հաշիվները:

Ֆոնդի ակտիվներից ստացված ողջ եկամուտը, որը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով՝ իրացված կապիտալի օգուտը, հաստատուն եկամտով արժեթղթերի գծով տոկոսների վճարումները և այլն, պետք է վերաներդրվի Ֆոնդում: Բաշխումներ չեն նախատեսվում:

Փայերի թողարկում և մարում. Ֆոնդի փայերի թողարկումը և մարումն իրականացվում են թողարկման և մարման ամսաթվի դրությամբ մեկ փային բաժին ընկնող գույք ակտիվների վերջին հասանելի արժեքի հիման վրա: Փայերի թողարկման համար որևէ վճար կամ գումար չի գանձվում: Մարման վճարները վճարում է դիմողը, որոնց կազմում են 0%-ից 3%՝ կախված մարման գործարքի տեսակից և սահմանվում են Ֆոնդի կանոններով և Հայաստանի Հանրապետության կիրառելի օրենսդրությամբ:

B. Բաժնետերերի կապիտալի և ֆինանսական պարտավորությունների փոփոխություններ

B1. Բաժնետերերի կապիտալի և փոփոխությունները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում

ՀՀ դրամով	2025թ.	2024թ.
Բաժնետերերի կապիտալը հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	7,640,781,852.67	5,892,790,277.37
Դրամական հոսքերը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում		
Թողարկումներ (ներառյալ ֆոնդի կողմից ստացված թողարկման վճարները)	1,332,900,460.40	1,150,315,589.40
Մարումներ (հանած ֆոնդի կողմից ստացված մարման վճարները)	(52,524,899.00)	(55,324,315.90)
Հաշվետու ժամանակաշրջանի զուտ եկամուտ մինչև հաշվեգրումները	455,603,116.77	376,782,204.82
Չուտ իրացված կապիտալի օգուտ և կորուստ մինչև հաշվեգրումները	57,862,324.64	(8,699,612.71)
Հիրացված կապիտալի օգուտի փոփոխություն մինչև հաշվեգրումները	525,727,159.11	284,917,709.69
Չուտ եկամտի բաշխում նախորդ հաշվետու ժամանակաշրջանում	0.00	0.00
Չուտ կապիտալի օգուտ և կորուստի բաշխում նախորդ հաշվետու ժամանակաշրջանում	0.00	0.00
Հիրացված կապիտալի օգուտի բաշխում նախորդ հաշվետու ժամանակաշրջանում	0.00	0.00
Չուտ եկամտի գծով վճարված միջանկյալ շահաբաժիններ հաշվետու ժամանակաշրջանում	0.00	0.00
Չուտ իրացված կապիտալի օգուտի և կորուստի գծով վճարված միջանկյալ շահաբաժիններ հաշվետու ժամանակաշրջանում	0.00	0.00
Չուտ չիրացված կապիտալի օգուտի և կորուստի գծով վճարված միջանկյալ շահաբաժիններ հաշվետու ժամանակաշրջանում	0.00	0.00
Այլ հոգվածներ	0.00	0.00
Բաժնետերերի կապիտալը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ (= Չուտ ակտիվներ)	9,960,350,014.59	7,640,781,852.67

B2. «Բաժնետերերի կապիտալ» տողի վերակազմավորում մասնավոր կապիտալի ֆոնդերի և այլ ներդրումային գործիքների համար

Դիտարկվող հավաքական ներդրումների գործիքների համար այս բաժնի ներկայացումը չի պահանջվում հաշվապահական հաշվառման կանոնակարգերով:

B3. Փայերի քանակի փոփոխությունը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում

B3a. Թողարկված և մարված փայերի քանակը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում

	31 դեկտեմբերի 2025թ.	
	Փայեր	Փայեր
Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում թողարկված փայեր	563,059.372418	1,332,900,460.40
Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում մարված փայեր	(22,181.373370)	(52,524,899.00)
Թողարկումների/մարումների զուտ մնացորդ	540,877.999048	1,280,375,561.40
Շրջանառության մեջ գտնվող փայեր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ	3,923,795.656555	0.00

B3b. Հաշվեգրված թողարկման և/կամ մարման վճարներ

	2025թ. Գումար
Ընդամենը հաշվեգրված թողարկման և/կամ մարման վճարներ	0.00
Հաշվեգրված թողարկման վճարներ	0.00
Հաշվեգրված մարման վճարներ	0.00

B4. Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ստացված և հատուցված անվանական գումարին վերաբերող դրամական հոսքեր

Դիտարկվող հավաքական ներդրումների գործիքների համար այս բաժնի ներկայացումը չի պահանջվում հաշվապահական հաշվառման կանոնակարգերով:

B5. Չուտ դրամական հոսքեր ֆինանսական պարտավորությունների գծով

